

Պղատօն զսկիդրն հոգւոյ՝ որ է հանճար ի գլխոջ որպէս յարկեղ գետեղեալ գնէ:

Հոգին է կառավար եւ տէր մեր:

Բաւականութիւն է յատուկ բարի մարդոյ, իսկ այլ բարութիւնք հասարակ կենդանեայ:

Երկու ազգ են մարդկան, մին տգէտ եւ գեղջուկ, որք գերայարգեն միշտ զօգուտ համեստութեան, եւ միւսն լուսաւորեալք՝ որք զամենայն իրաց զարժանաւորութիւն նախապատուեն:

Բարեաց մարմնոյ եւ բախտի որպէս սկիզբն դոյ՝ նմանապէս եւ վաղճան սակայն գերազանց գործողութիւն մտայ՝ նմանապէս եւ հոգին են անմահք:

Մայր ամենայն արհեստից է իմաստասիրութիւն, որ ոչինչ յԱստուծոյ անմարթ է վասն զայն առատ եւ գերազանց շնորհս պարգեւելոյ մարդկան կենաց:

Առաջնորդ եւ կառավարիչ մահկանացու կենդանութեան է հոգին, որ այնքան զօրաւոր եւ կարող է եւ երեւելի, մինչ ո՛չ ինչ բազմութիւն զօրաց, ո՛չ ինչ դժուար եւ անսովոր մեծութիւն անդամոյ այլոց կենդանեայ արգելուլ կարեն, առ պսել եւս հարստահարին ի մէնջ եւ ենթարկին ընդ մերով իշխանութեամբ:

Որպէս ազգ մարդկան բաղկացեալ է յերկուց մասանց ի հոգւոյ եւ ի մարմնոյ, նմանապէս ամենայն գործք եւ ջանացողութիւնք, ոմանք հետեւին ամենայն աշխատանայ եւ ոմանք մարմնոյ, իսկ այլք բնութեան հոգւոյ:

Գեղեցկութիւն դիմաց, մեծ հարլստութիւն, զօրութիւն մարմնոյ ի սուղ

միջոցի չքանան, բայց գերազանց գործք մտաց նմանապէս եւ հոգին են անմահ:

Յոյժ արժանի պարտաւանաց յիմարութիւն այնոցիկ մարդկան որք տուեալ զինքեանս բաւականութեանց եւ հեշտութեանց մարմնոյ անցուցանեն զկեանքս զեղիսութեամբ եւ անգործութեամբ, բայց թողուն զմիտս կոպիտ եւ անկիրթ:

Ո՛չ ինչ է մեծ բարի քան զառողջ միտս յառողջ ի մարմնի:

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն

Հայոց ծխական Գպրոցաց համար՝ նորոգ պատրաստուած հետաքայ Կանոնադրութիւնը՝ որ առանձին տպուած է եւ կարելոր եղած տեղերը խորհուած, տրժան հոմարեցանք Ուսադրոյս միջոցաւ եւս հրատարակել ի տեղեկութիւն եւ ի դէպս հեռաւոր եւ մերձաւոր մերազնէից:

Ինչպէս Կանոնադրութեան մէջ յիշուած է, ներկայս փորձոյ համար է եւ չորս տարիէն յետոյ նորոգ փոփոխութեանց եւս պիտի ենթարկուի եմէ ուշադրութեան արժանի կարեւոր եւ օգտաւէտ դիտողութիւնք եւ անհրաժեշտ փոփոխութեանց կարօտ փարձեր տեսնո՞ւն:

ԿԱՆՈՆՔ

ԾԽԱԿԱՆ ԳՊՐՈՅԱՅ

1. Ծխական Գպրոցք ազգիս կարգեալ են իտալ մանկանց քաղաքաց եւ գիւղօրէից զսկզբնական կրթութիւն եւ դուստմն կարեւորագոյն գիտելեաց:

2. Ծխական Գպրոցք բացեալ լինին հրամանաւ Հոգեւոր Իշխանութեան Ազգիս:

3. Մխական Դպրոցք առհասարակ ունին երկուս դասարանս: եւ ժամանակ ուսման աշակերտաց սահմանի յերկուս երկուս ամս. որով բովանդակ ուսումն ի նոսին աւարտի յամս չորս:

4. Աւարկայք ուսման ի մխական դպրոցս են

ա. Կրօնագիտութիւն.

բ. Հայոց լեզու.

գ. Ռուսաց լեզու.

դ. Վայելչագրութիւն Հայոց եւ Ռուսաց.

ե. Թուաբանութիւն.

զ. Պատմութիւն.

է. Աշխարհագրութիւն եւ սկզբունք Բնագիտութեան.

ը. Զայնագրեալ երգեցողութիւն.

թ. Գծագրութիւն.

Ծանօթութիւն. — Ընդարձակութիւն կամ չափ ուսման առարկայից աշխարհիկ սահմանի յառանձին հրահանգս կամ նախադիմս, որք զինն ի վերջ կանոնացս այսոցիկ (Թ. 4. եւ 2):

5. Զնոյն նախագիծս եւ հրահանգս պարտին ունել եւ ծխական դըպրոցք Յրիւրդաց, միայն թէ սորա պարպին եւ ի Զեռագործս:

6. Մխական Դպրոցք բացեալ լինին եւ պահպանին՝ ըստ կարգադրութեան Հոգեւոր Իշխանութեան՝ ա. չափաւոր թոշակօք աշակերտաց, բ. մասամբ եկեղեցական արդեանց, եւ գ. կամաւոր նուիրանօք բարեպաշտից:

7. Ժողովուրդք թաղին կամ գեղջն ուր բացեալ լինի Դպրոցն՝ Մխական՝ վարտին գրաւոր խոստմամբ յապահովի լացուցանել զգումար գրամոյն որ պի-

տոյ իցէ ի բացումն եւ ի պահպանութիւն Դպրոցին իւրեանց:

8. Հոգեւոր Իշխանութիւնն տայ հրաման առնուլ զմասն ինչ յեկեղեցական արդեանց՝ սահմանելով զայն ըստ չափու բազմութեան ժողովրդեանն եւ արդեանց եկեղեցւոյն, եւ ժողովուրդն օրինաւոր խոստմամբ եւ գրով յանձն առնուլ լրացուցանել զգումարն որ պիտոյ իցէ ի պահպանութիւն Դպրոցին:

9. Ի հաւաքել եւ ի մատակարարել զգրաման կարեւորս ընտրին ի ժողովրդէնէն հոգաբարձուք երեք, որք եւ հաստատին ի Հոգեւոր Իշխանութենէ, եւ տան նմին զտարեկան հաշիւս մօից եւ ծախսոց:

10. Շինուածք կարգեալք ի պէտս երկդասեան Մխական Դպրոցաց կառուցանին, կամ յարմարին ըստ կարի ձեւոյն եւ գծագրաց հրատարակելոց յարանց հմօից արուեստի մանկավարժութեան:

11. Անմիջական տեսչութիւն միոյ միոյ Մխական Դպրոցի յանձնեալ լինի ի Թեմական Տեսչէն միում ի վարժապետաց. իսկ Թեմական Տեսուչն պատասխանատու է առաջի Հոգեւոր Իշխանութեան վասն կանոնաւոր դասաւուսութեան աշակերտաց, վասն արտաքին բարեկարգութեան նոցին, եւ առհասարակ վասն ճիշտ կատարման ամենայն կարգադրութեանց որ լինիցին սակս տեսչութեան Դպրոցացն:

12. Վարժապետին պարտք են յօրինել՝ ա. զցուցակս աշակերտաց ըստ օրինակին եղելոյ ի վերջ տետրակիս ընդ թուահամարաւս 3, եւ բ. զօրագրու-

Թիւնս ըստ օրինակին ընդ թուահամարաւս 4 :

13. Թեմական Տեսուչք պարտին գէթ երկիցս ի տարւոջ յայց ելանել միում միում ի Յիսական Դպրոցաց եւ տեղեկանալ ընթացից նոցին եւ յառաջագիմութեան, եւ ի վերջ տարւոյն տալ զնոցանէ Հոգեւոր Իշխանութեան զընդարձակ տեղեկութիւն գրաւոր :

14. Բաց ի Հոգաբարձուաց կարգեալ լինի ի Հոգեւոր Իշխանութենէ առաջարկութեամբ Թեմական Տեսչին եւ Աւագ քահանայ որ կամ գէթ Ատրկաւագ որ ուսումնական, որ ընդ ժամանակս ժամանակս յայց ելանելով Դպրոցին՝ տեղեկանայ ընթացից աշակերտացն եւ պիտոյից նոցին :

15. Թիւ աշակերտաց միոյ վարժապետի չպարտի երբէք լինել աւելի քան զվաթսուն. եւ եթէ ըստ պիտոյից տեղւոյն հարկ լիցի յաւելուլ զթիւս աշակերտաց, մարթ է բանալ առ միում միում յերկուց դասարանաց մէն մի զուգահեռական դասարանս հանգերձ առանձինն ուսուցչօք :

16. Յառաջին դասարան Յիսական Դպրոցաց ընկալեալ լինին մանկունք որոց հասակն չիցէ պակաս քան զեօթն ամաց եւ ոչ աւելի քան զերկոտասան : Եթէ գտանիցին մանկունք արդէն պատրաստեալք ի մտանել յերկրորդ դասարան, հասակ այնպիսի տղայոց չպարտի լինել աւելի քան զամս 15, եւ օրիորդացն աւելի քան զ13 :

17. Յիսական Դպրոցք տղայոց եւ օրիորդաց պարտին լինել ամենայն ուրեք օրիշք ի միմեանց ըստ ամենայն պարա-

գայից, թէպէտեւ երկուքին եւս գտանիցին ի նմին գաւթի եկեղեցւոյ :

18. Զժամանակ ընդունելութեան աշակերտաց ի Յիսական Դպրոցս թէպէտ եւ ոչ է մարթ ճշգիւ սահմանել, բայց առհասարակ պարտ է ծանուցանել ծրնողաց նոցին՝ զի ժամանակ ընդունելութեան մանկանց նոցա է երկիցս ի տարւոջ, այսինքն ի տարեգլխի եւ ի սկզբան տարեկան ուսմանց :

19. Ամենայն ուսուցիչ զօր ամենայն նշանակէ յօրագրութեան (ըստ օրինակին Թ. 4) զանուանս բացակայ աշակերտաց եւ զպատճառս բացակայութեան նոցին, եւս եւ զառարկայս զորս ուսեալ իցեն աշակերտք յայնմ աւուր :

20. Աշակերտք եւ աշակերտուհիք որք ծոյլ իցեն ի բնէ, կամ բոլորովին անընդունակք եւ անուղղայք, յետ կարեւոր խրատուց եւ աղարարութեանց առ ծնողս, խորհրդով հոգաբարձուաց Դպրոցին ի բաց արձակին :

21. Մանկունք որք աւարտեալ իցեն զքառամեայ ընթացս ուսման Յիսական Դպրոցաց՝ ընդունին զվկայագիրս յետ տարեկան հարցաքննութեան :

22. Հարցաքննութիւն աշակերտաց որք աւարտեալ իցեն զընթացս ուսման՝ լինի առաջի վարժապետաց եւ հոգաբարձուաց Դպրոցին ըստ օրինակին եղելոյ ի վերջ տետրակիս ընդ թուահամարաւս 5, յորում կազմի ցուցակ աշակերտաց՝ որք պատրաստին աւարտել զընթացսն եւ անկանել ընդ հարցաքննութեամբ :

23. Զափ պահանջանաց ի հարցաքննութեան ըստ իւրաքանչիւր առարկա-

յից՝ սահմանի նախագծիւք նոցին՝ եւ նոքա միայն ընդունին վկայութիւնս աւարտման ընթացից՝ որք բոլորովին գիտակիցեն նշանակելոյն ի նախագիծսն յայնստիկ :

24. Եթէ որ յաշակերտաց ոչ ըստ բաւականին տուեալ իցէ պատասխանի յառաջնութեան հարցաքննութեան, կարող է անկանել ընդ երկրորդ հարցաքննութեամբ, բայց միայն զինի միոյ տարւոյ: Եւ այն՝ մնալով յայնմ ամի եւս ի նմին Դպրոցի :

25. Հարցմունք հարցաքննելի աշակերտաց առաջարկին ըստ ընարութեան քննչաց նոցա, յորոց իւրաքանչիւրն նշանակէ յիւրումն ցուցակի զչափ հըմութեան աշակերտացն ըստ իւրաքանչիւր առարկայից: Յաւարտ պատասխանեաց հարցաքննեալ աշակերտին ըստ այս ինչ առարկայի, յընդհանուր գումարէ նշանակաց կաղմի միջին նշանակ եւ գրի այն յընդհանուր ցուցակին հարցաքննութեան :

Ծանօթութիւն. — Նշանակին են սորա. 3 — Յոյժ դովելի, 4 — Գովելի, 5 — Չպիտոր, 2 — Թերի, եւ 4 — Տկար:

26. Յաւարտ հարցաքննութեան կազմի արձանագրութիւն, յորում ստորագրեն վարժապետք եւ հոգաբարձուք. եւ արձանագրութիւնն այն մատուցանի ի տեսութիւն Թեմական Տեսչին. իսկ նա նշանակէ ի ցուցակի անդհանդէպ աշակերտաց որք արժանաւորք իցեն վկայագրի՝ այսպէս. «Արժանի է վկայագրոյ», եւ ապա դարձուցանէ դարձանագրութիւնն զայն ի Դպրոցն ի պահպանութիւն, եւ գլխաւոր վարժա-

պետն պատրաստէ զվկայագիրն ըստ ձեւոյն եղելոյ ի վերջ տետրակիս (Թ. 6), եւ ապա անցուցանէ զայն յառանձին մատեան Դպրոցին (ըստ օրինակին որ ընդ թուահամարաւս 7). այլ եւ ի վկայագիրսն գնէ զթուահամարս՝ ընդ որովք դրոշմեալ են վկայագիրքն յայնմ մատենի, եւ ապա տայ զվկայագիրն ծրնողաց մանկուոյն կամ խնամակարաց նոցա՝ ընդունելով ի նոցանէ ստորագրութիւն ի մատենին :

27. Եթէ ոմանք յաշակերտաց որք աւարտեալ իցեն զընթացս ուսման ի Ծխական Դպրոցի՝ կամիցին մտանել ի Հոգեւոր Դպրոց վիճակին, եւ պատրաստիլ ի մտանել ի մին ի դասարանաց նորին, կարեն ըստ խնդրագրոյ ծնողացն մնալ ի դպրոցին այլ եւս տարի մի եւ պատրաստիլ, քաղուածս առնելով ուսմանցն եւ ընթեռնելով զգիրս պիտանիս ըստ իւրաքանչիւր առարկայից՝ ըստ առաջնորդելոյ վարժապետաց :

28. Ի տըւչութեան վկայագրոց աշակերտուհեաց Դպրոցին օրիորդաց՝ պահպանի նոյն կարգ նշանակեալ ի յօդ. 26:

Ծանօթութիւն. — Տպուիր վկայագիրք որք տուել լինին ըստ կանոնացն այսոցիկ, պատրաստին ըստ կարգադրութեան Թեմական Տեսչաց:

29. Ուսումն ի Ծխական Դպրոցս տեւէ ընդհանրապէս ընդ ամն ողջոյն միայն ի դէպս եւ ի աեղիս յորս անպատճառ հարկաւոր դատիցի տալ աշակերտաց դարձակուրդ (եւ այն ոչ աւելի քան զաւուրս քառասուն)՝ պարտ է նոցա յայնմ միջոցի եւս պարապել քաղուածով ուսմանցն ընդ հսկողու-

թեամբ միոյ կամ երկուց վարժապետաց :

30. Աշակերտք եւ աշակերտութիւնք թխական Դպրոցաց արձակին յառաջիկայ աւուրս :

«. Յաւուրս տօնից խաչանիշ գրորոշմելոց յՕրացուցի մերում :

է. ՅԱւագ շաբաթու (յորում պարտին խոստովանել եւ հաղորդիլ Սրբոյ Խորհրդոյն) :

Գ. Յաւուրս անուանակոչութեան եւ ծննդեան Օգոստոսիառ Կայսեր, Կայսրուհոյ, Ժառանգին եւ ամուսնոյ նորա, եւս եւ յաւուրս գահակալութեան նոցա եւ օծման ի Կայսրութիւն :

31. Կրօնուսոյց վարժապետին պարտք են ի տօնական աւուրս յառաջ քան զպատարագն բացատրել աշակերտաց զխորհուրդ տօնին, որպէս եւ զիմաստ Աւետարանի այնր աւուր :

32. Յուսուցչութիւն թխական Դպրոցաց կարգին առ նուազն երեք դասատուք, այս ինքն դասատու առաջնոյ դասարանին, դասատու երկրորդի դասարանին եւ ուսուցիչն Կրօնագիտութեան, յերկոսին դասարան : Եթէ բացցին ուրեք եւ զուգահեռական բաժինք, կարգին եւ ի նոսա մի մի ուսուցիչք :

33. Ուսուցիչք եւ վարժապետք թխական Դպրոցաց առհասարակ ընտրին եւ առաջարկին ի Թեմական Տեսչաց ի հաստատութիւն Առաջնորդի վիճակին :

34. Ռոճիկ ուսուցչաց ի թխական Դպրոցս եւ չափ նորին սահմանի ըստ

հանգամանաց տեղեացն եւ անձանց՝ հայելով ի գրամական կարողութիւն Դպրոցին :

35. Գումարն դրամոյ նշանակեալ ի պահպանութիւն դպրոցին ի տեղական աղբերաց՝ պարտի ամառ յառաջ կամ գէթ վեցամսեայ ժամանակաւ յառաջագոյն գտանիլ ի ձեռս Հոգաբարձուաց, եւ եթէ ի վերջ այնր տարւոյ գումարն այն ոչ ծախեսցի յառարկայս սահմանեալս, մնացորդ նորին դարձուցանի ի դրամագլուխ պահեստի եւ գոլով սեպհականութիւն Դպրոցին, աւանդի յանքոյթ դրամատուն ուրեք՝ որպէս զի աճեսցէ շահաբերութեամբ :

36. Ամենայն թխական Դպրոց պարտի ունել զկնիք ըստ ձեւոյն եղելոյ ի վերջ տետրակիս ընդ թուահամարաւ 10 :

37. Թեմական Տեսուչք պարտին փոյթ ունել՝ զի ըստ չափու դրամական կարողութեան տեղեաց տեղեաց գտանիցին յամենայն Դպրոցս յառաջիկայ դպրոցական պիտոյք :

«. Գրադարան :

է. Զանազան ուսումնական եւ դասական պիտոյք, յորոց մարթիցէ բաշխել ինչ ինչ եւ ձրիաբար աղքատ աշակերտաց՝ որք ոչ ունիցին կարողութիւն հայթհայթելոյ զայնոսիկ ծախիւք իւրեանց :

38. Գրեան եւ թուղթ եւ այլ պիտոյք ուսումնականք աշակերտաց վաճառին ծնողաց նոցին ի գրասենեկի Դպրոցին :

39. Ի Դպրոցին պարտի գտանիլ Ժապախեալ մանրամասն ցուցակ ամենայն

կահոց եւ կարասեաց Դպրոցին, եւս եւ գրենոյ եւ այլոց ուսումնական պիտոյից, ստորագրութեամբ Հոգաբարձուաց, այլ եւ առանձինն տեարակ վասն գրելոյ ի նոսրն զգրեան եւ զայլ ուսումնական պիտոյս յառժամանակեայ կիրառութիւն վարժապետաց :

40. Դրամքն հաւաքեալք ի վաճառմանէ գրենոյ եւ այլոց ուսումնական պիտոյից յաւելեալ լինին ի դրամագլուխըն պահեստի Դպրոցին : Զէ օրէն վաճառել օտարաց զգասազիրս եւ զԴպրոցական պիտոյս ի գրասենեկէ Դպրոցին, այլ եւ ոչ տալ ինչ օտարաց յառժամանակեայ կիրառութիւն :

41. Կանոնադրութիւնս այս սահմանի փորձոյ աղագաւ վասն չորից ամաց, եւ յետ այնորիկ հաստատեսցի կամ փոխեսցի :

(Թ. 1.)

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

ԴԱՍԵՍՈՍՈՒԹԵԱՆ ԿՐԾՆԱԳՈՐԾԵԱՆ

Ի ԵՒԱԿԱՆ ԴՊՐՈՅՍ

Ա. ԴԱՍԱՐԱՆ.

Նպատակ գասախօսութեան կրօնագիտութեան է գաստիարակել զմանկունքս ի քրիստոնէական բարեպաշտութեան ըստ կանոնաց եկեղեցւոյ. եւ առ այս նպատակ ուղղելի է բոլանգակ դասախօսութիւն այնք առարկայի :

Առաջին՝ բնական եւ միանգամայն ազգու հնարք կրթելոյ զմանկունս ի բարեպաշտութեան է ազնւն : Բայց որպէս զի աղօթականացութիւնն եղիցի արդարեւ բարեպաշտական եւ բարոյական դաստիարակութիւն, պարտի տպաւորիլ ի սրտի մանկան այնպէս՝ զի նա յաղօթել իւրում ոչ միայն կրկնեսցէ զբառս սերտ ի բերան ուսեալս, այլ եւ բոլորով սրտիւ ամբարձցէ զմիտս իւր առ այն՝ որում աղօթէ : Վասն որոյ հարկ է զի մանուկն բացայայտ եղանակաւ իմացի զաղօթսն. այլ եւ պարտ է աղօթիցն այնպիսիս լինել՝ որք յարմար իցեն հասակի եւ իմացողութեան մանկանց :

Յառաջ քան զամենայն ինչ պարտ է տալ մանկանց իմանալ՝ թէ զինչ է Աստուած արարիչն եւ նախախնամող՝ իբրեւ Հոգի ամենուրեք եւ ամենատես, Հայր գթած եւ մարդասէր, եւ թէ որպէս աղօթք մեր պարտին լինել առ նա սրտառուչք եւ եռանդունք :

Յորժամ նոր ինչ աղօթս առաջի կայցէ ուսուցանել մանկանց, պարտ է նախ բացատրել նոցա զիմաստս նորին, եւ այն յաշխարհիկ լեզու, եւ ապա ի գրոցն, եւ այն ի գասարանի՝ լսելով ի բերանոյ կրօնուսոյց վարժապետին :

Առաջին աղօթք մանկանց պարտին լինել առ Աստուած՝ մի եւ երեքանձնեայ, բացատրելով մանկանց՝ թէ խորհուրդն ամենասուրբ Երրորդութեան՝ վարդապետութիւն է Եկեղեցւոյ, յոր պարտին հաւատալ՝ առանց ջանահնար լինելոյ բացայայտ եղանակաւ հասու լինել այնք :

Նախ քան դամենայն պարտին ման-
կունք ուսանել զԼայր Ջէրն՝ զոր ուսոյց
մեզ ինքն իսկ Փրկիչն մեր. ապա զգլխա-
ւոր աղօթս անուանու եւ երեկոյի որք
գտանին ի ժամագիրս մեր, որպիսի են
Տէր եմէ զըրեւնէն իմ. Այս քառասուն-
հինգ օր անցաւ եւ ին՝ յանուանու
եւ Փառք քան Տէր Աստուծոյն, Անկախին
եւ Անկախ Տէրն յերեկոյին: Բայց յայն-
մանէ կրօնուսուցչին պարտք են բացա-
յայտել մանկանց զխորհուրդ մասանց
շինուածոյ եկեղեցւոյ եւ զգլխաւոր քա-
րօզս եւ աղօթս պատարագին:

Յետ պատմելոյ մանկանց (ի պատմութենէ Սուրբ Գրոց) զստեղծումն աշխարհի, զպատուիրանազանցութիւն նախահարց եւ զխոստումն գալստեան Փրկչին, անցանէ Կրօնաւորոցն ի պատմութիւն Ծննդեան Փրկչին խոստացելոյ՝ ի որոց կուսէն Մարիամայ։ — Ի պատմութենէ Նոր Կտակարանին պարտ է պատմել մանկանց միայն զայնոսիկ պատմութիւնս որք բացայայտեն զխորհուրդս գլխաւոր տօնից Եկեղեցւոյ եւ զկարեւոր մասունս վարդապետութեանց Քրիստոսի։

Միանգամայն ուսուցանի մասն մասն
բաժանմամբ Հանդանակն հաւատոյ,
պարզելով մանկանց ըստ չափու հաս-
կացոցոյ թեան նոցա զիմաստս նորին:

Ապա ուսանին մանկունք համառօտիւ
գալատմութիւն Հին Կտակարանի, եւ
ընթեռնուն յԱւետարանէ զգլուխս բա-
նիցն՝ զօրս արդէն ուսեալ իցեն :

Հանձորաբիրն. — Պահանջի ի մանկանց ոչ միայն
սերտ Կառնթիւն անցից սրտովելոց յԱստուածաշունչ

զիրո, այլ և զի բաշ զխառնոցնն պատմել ղնոսին
բացայայտ բանիւք, և ըստ կարիւ կանոնաւոր ասա-
ցուածով:

Б. ГОДЕРУС.

Մահրամասն պատմութիւն Նոր Կտակարանի Հանդերձ լիբրժանութեամբ սրբոյ Աւետարանին :

Ընթերցողման գլխոց ինչ բանից ի Գործոյ Առաքելոց :

Ընթերցումն եւ բացատրութիւն գըլ-
խոց ինչ Առաքելական թղթոց եւ քանի
մի Սաղմոսաց :

Ուսանել ի բերան զգլխաւոր մասունս
Հաւատոյ եւ զխորհուրդս տառարագի
եւ այլոց կարգաց աստուածպաշտու-
թեան :

Քրիստոնէական վարդապետութիւն :

(P. 2.)

Հ Բ Է Հ Ե Ն Գ

Գ Լ Ս Ե Խ Օ Ս Ո Ի Թ Ե Ը Ն Ո Ի Ս Մ Ը Ն Ց

Ի ԾԻՆԿԱՆ ԴՊՐԱՅՍ

45303 16201

Յառաջ քան զամենայն պարտէ միտ
գնել՝ զի ուսցին աշակերտք ընթեռնու
հայերէն կանոնաւոր անտայթաք եւ մը-
տառու եղանակաւ, եւ ուղղութեամբ
բացատրել գրով զմիտս իւրեանց :

— Ահա՛նա՛նք կոչի ընթերցումն յորժամ մանուկն ընթեռնուցու ըստ կանոնաց ուղիղ առողջանութեան՝ միտ գնելով կետադրութեանց : — Ահա՛նա՛նք լինի ընթերցումն յորժամ մանուկն քաջ միտ գնելով իմաստից բանիցն՝ առանց կակաղելոյ եւ կրկնելոյ ընթեռնուցու : — Իսկ հա՛նա՛նք լինի ընթերցումն՝ յորժամ մանուկն ի միտ առնուցու կամ իմանայցէ զընթերցեալն :

Ա. ԳԱՍԱՐԱՆ.

Յառաջնում գասարանի սկսանին մանկունք ընթեռնուլ « զՆախակրթանքս Հայերէն լեզուի », ըստ կանոնաց եղելոց իսկզբան գրոցն. որով ուսանին միանգամայն զգրաւարժութիւն, զուղիղ առողջանութիւն, զուղղագրութիւն եւ զտարերս գրոց լեզուի՝ հանդերձ թարգմանութեամբ բառից եւ համառօտ ասացուածոց :

Ուսուցիչն Հայերէն լեզուի ի նոյն գրոց եւ ի նոյն դասուց յօրինէ նորանոր հարցմունս դիւրահասս մանկանց, եւ պահանջէ ի նոցանէ զպատասխանիս նախ բանիւ եւ ապա գրով :

Ի տալ մանկանց կրթութիւնս գրաւորս՝ պարտ է փոխանակ տալոյ նոցա արտագրել ի գրոց՝ թելադրել նոցա ըզգրելիսն. եւ առ այս նախ ընթեռնու ուսուցիչն զհատուածն գրելի, բացատրէ մանկանց զլրիպակս զորս կարող են առնել ի գրելն, եւ ապա սկսանի թելադրել : Յաւարտ գրութեանն եւ ուղղելոյ ուսուցչին զլրիպակսն բանիւ

բերանոյ, օգտակար է տալ մանկանց ընթեռնուլ զնոյն բան ի դասագրին, որպէս զի ինքեանք իսկ տեսցեն զլրիպակսն զորս արարեալ իցեն :

Յառաջնում գասարանի բաւական է ուսանել մանկանց ըստ կանոնացս այսոցիկ զառաջին եւ զերկրորդ մասունս Նախակրթանաց հայերէն լեզուի :

Բ. ԳԱՍԱՐԱՆ.

Աշակերտք երկրորդի գասարանին առնեն զնոյն կրթութիւնս ի վերայ երրորդ եւ չորրորդ մասանց նոյն գրոց Նախակրթանաց, յորս գտանին եւ սկզբունք Քերականութեան, հանդերձ վերլուծութեամբ եւ կրթութեամբ շարագրութեան եւ թարգմանութեան, որով յընթացս չորից ամաց ուսանին մանկունք Մխական Դպրոցաց՝ եթէ ոչ զանսխալ շարագրութիւն ի գրոց բարբառ, գէթ իմանալ զայն անթերի, եւ յաշխարհիկն շարագրել բանս՝ ըստ կանոնաց ուղղագրութեան :

ՌՈՒՍՍԵ լԵԶՈՒ

Ա. ԳԱՍԱՐԱՆ.

Ուսուցիչն լեզուին Ռուսաց՝ պարտի խօսել ընդ աշակերտսն ի լեզու Ռուսաց. եւ եթէ գիտակ իցէ Հայերէնին, պարտի միայն զնշանակութիւնս բառիցն բացատրել Հայերէն : Յառաջնումն գասարանի պարտ է աշակերտաց ուսանիլ զանսայթաք ընթերցումն Ռուսերէնին՝

Հանդերձ ուղիղ առողջանութեամբ միոյ միոյ ի տառիցն, եւ ուսանելով բառս եւ ոճս բանից ի վերայ առաջնոյ մասին Родное Слово գրոցն Ուշինսքեայ :

Բ. ԴԱՍԱՐԱՆ.

Աշակերտք վարժեալք յառաջնումն դասարանի յանսայթաք վերժանութիւն եւ ի բերանացի եւ գրաւոր պատասխանատուութիւն որիշ որիշ հարցմանց ուսուցչին՝ եւս եւ յընդօրինակել ի գրոց հատուածս բանից անսխալ ուղղագրութեամբ, յերկրորդումն դասարանի ըսկսանին ուսանել զառաջին մասն Քերականութեան լեզուին Ռուսաց, եւ ի չորրորդում ամին նաեւ զերկրորդ մասն Հանդերձ կանոնօք ուղղագրութեան, շարագրութեամբք համառօտ յօդուածոց եւ սերտողութեամբ արձակ եւ փառաւոր բանից :

ԹՈՒՆԲԱՆՈՒԹԻՒՆ

Ա. ԴԱՍԱՐԱՆ.

Յառաջնում դասարանին պարտին ուսանել աշակերտքն ի Հայ լեզու զչորեսին գլխաւոր գործողութիւնս Թուաբանութեան այս ինքն զգումար, զհանումն, զբաղմապատկութիւն եւ զբաժանումն՝ հանդերձ փորձիւք, եւ միանգամայն մտաւոր համարողութեամբ, եւ այն ըստ կարի բաղմաթիւ օրինակօք՝ զորս պարտի ուսուցիչն առաջարկել նոցա ի լուծումն՝ մտաւոր հաշուարարու-

թեամբ եւ գրաւոր առաջարկութեամբք, Միանգամայն պարտին աշակերտքն յերկրորդում ամի առաջնոյ դասարանին տեղեկանալ մասանց դրամոց, ժամանակի, կշռոց, չափուց եւլն :

Բ. ԴԱՍԱՐԱՆ.

Յերկոսին ամս երկրորդի դասարանին ուսանին աշակերտք զկիրառութիւն համարչի, որ է «չէ», եւ ասլա զպարզ կոտորակս եւ զլուծումն առաջարկութեանց ըստ կանոնաց երբեակ թուոց, խառնուրդից, ընկերութեան եւ շահուց կամ տոկոսեաց՝ առանց թուաբանական համեմատութեանց :

Ընդ նմին ուսանին մանկունք զհիմնական կանոնս մակարդակաչափութեան եւ գծագրութեան :

ԱՃԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ.

Ուսուցիչն աշխարհագրութեան պարտի այնպիսի ոճով ուսուցանել Հայերէն զայս կարեւոր գիտութիւն, զի աշակերտք երկոցուն դասարանաց Միական Վպրոցին նախ քաջ տեղեկացին ի վերայ երկրագնտի կամ համատարած աշխարհացուցի թէ ո՞ր է ցամաքն եւ զանազան մասունք նորին եւ ո՞ր ջուրն հանդերձ իւրովք մասամբքն : Ապա պարտին մանկունքն ուսանել թէ ի քանի մասունս բաժանի աշխարհ, եւ ո՞րք են յատկութիւնք միոյ միոյ ի մասանց անտի : Յետ այնորիկ պարտին ուսանել զաշխարհագրութիւն Ռուսիոյ, այս ին-

քրն զընդհանուր գիրք եւ դատա-
նումն Ռուսաստանի յԵւրոպական եւ
յԱսիական մասունս, եւս եւ ի կուսա-
կալութիւնս եւ ի գաւառս (առանց ու-
սանելոյ հարկաւ զանուանս միոյ միոյ ի
նոցանէ): Պարտին ուսանել եւ զմայրա-
քաղաքս, եւ զգլխաւոր քաղաքս Ռուսիոյ
եւ զթիւ բնակչաց աշխարհին, եւ զա-
նուանս գլխաւոր աղգաց եւ ժողովրդոց
որ ի նմա. ընդ որս եւ առանձինն հըմ-
տանալ զՀայաստանէ եւ զգլխաւոր լե-
րանց, գետոց, եւ նշանաւոր հնութեանց
նորին:

Յետ այնորիկ պարտին ուսանել զա-
նուանս եւ զտեղիս գլխաւորս հնգեցուն
մասանց աշխարհի, սկսանելով յԵւրո-
պայէ, այլ եւ զմայրաքաղաքս ամենայն
տէրութեանց հանդերձ թուով բնակ-
չացն եւ պէսպէս յատկութեանց նոցին,
զորս պարտի ուսուցիչն բերանացի պատ-
մելով շարժել զհետաքննութիւն աշա-
կերտաց ի տեղեկանալ այնմ ամենայ-
նի:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ.

Աշակերտք ծխական դպրոցաց պար-
տին ուսանել հայերէն ղսկզբունս ընդ-
հանուր պատմութեան հին եւ նոր ազ-
գաց, եւ փոքր մի ընդարձակագոյն ըզ-
պատմութիւն Հայոց, եւ զպատմութիւն
Ռուսաստանի ի սկզբանէ մինչեւ ցմեր
աւուրս:

Առ այս պարտի ուսուցիչն պատմու-
թեան ի դասախօսել իւրում պատմել
զսահմանեալ ինչ անցս կամ զգէտպամ-

բողջութեամբ, եւ ապա հարցանել ա-
շակերտաց զնոյն ի բաղմամբիւ հարց-
մունս եւ ի պատասխանիս բաժանելով
զգասն. ապա եւ ոմանց յաշակերտացն
տալ պատմել զնոյն դաս ամբողջապէս,
որպէս զի ոչ միայն գիտասցեն զգէտպն
հանդերձ անուամբք անձանց եւ տե-
ղեաց եւ ժամանակին կամ թուականի,
այլ եւ վարժեսցին ի կարգաբանութիւն
եւ ի յստակ բացատրութիւն ուսելոցն:
Առ այս մեծապէս օգտակար է տալ
մանկանց առնել զշարագրութիւնս իւր-
եանց զպէսպէս մասանց պատմութեան,
կամ զնոյն դասս ի գրի հարկանելով:

ՍԿԶՐՈՒՆՔ ԲՆԱԿԱՆ

ԳԻՏՈՒԹԵԱՆՑ.

Յերկուս ամս առաջնոյ դասարանին
պարտին աշակերտք ուսանել յընթերցա-
րանս իւրեանց ի հայ լեզու զգլխաւոր
եւ զղուարճալի մասունս բնական պատ-
մութեան կենդանեաց եւ բուսոց եւ
հանգաց, առանց միւելոյ յուսումնական
դասաւորութիւնս եւ ի յատկութիւնս
նոցին: Իսկ յերկրորդում դասարանին
պարտին ուսանել նոյնպիսի գիւրընտել
եւ սրարդ ոճով զսկզբունս այլոց բնական
գիտութեանց, մանաւանդ բնագիտու-
թեան եւ բնալուծութեան՝ առ որ մե-
ծապէս օգտակար լիցի ունել ի ծխա-
կան Դպրոցի եւ զգլխաւորագոյն մեքե-
նայս կամ զգործիս բնագիտութեան:

ՇԱՐԱԹԱԿԱՆ ԹԻՒ ԴԱՍՈՒՅ

Ի ԺԻՆԿԱՆ ԴՊՐՈՅՍ

Ա. ԴԱՍԱՐԱՆ. Բ. ԴԱՍԱՐԱՆ.

	Ա.	Բ.	Գ.	Դ.
	ՏԱՐԻ.	ՏԱՐԻ.	ՏԱՐԻ.	ՏԱՐԻ.
Կրօնագիտութիւն	6.	6.	6.	6.
Հայոց լեզու	6.	6.	6.	6.
Ռուսաց լեզու	6.	6.	6.	6.
Թուարանութիւն	5.	5.	6.	6.
Պատմութիւն	—	—	5.	5.
Աշխարհագրութիւն եւ բնագիտութիւն	—	—	5.	5.
Վայելչագրութիւն եւ Գծագրութիւն	2.	2.	4.	4.
	25.	25.	34.	34.

Խանթորարիւն Ա.— Ժամանակ սկսանելոյ եւ աւարտելոյ դասուց նշանակի ի Թեմական Տեսչէն՝ հայելով ի հանդամանս տեղոյ Դպրոցին:

Խանթորարիւն Բ.— Զօր ամենայն յետ աւարտման դասուց պարապին աշակերտք (ըստ կարի ամենեքեան) յարուեստ ծայնադրութեան եւ ի ծայնադրեալ երգեցողութիւն կէս ժամ. որով եւ առաջնորդութեամբ ուսուցչին ծայնադրութեան երգեն յեկեղեցւոջ ի Կիւրակէս եւ ի տօնական աւուրս:

(ՕՐԻՆԱԿ Թ. 6.)

ՎԿԱՅԱԳԻՐ

Աշակերտ (կամ Աշակերտուհի)
Ծխական Դպրոցի (այս անուն) քաղաքի (կամ գեղջ) (ասոր նշանակելի

Շ

էն անուն, հայրանուն եւ մականուն, վեճակ կամ կողմնակի, որից ծննդեանն, որպէ՛ս, ասիւն եւ օր ծննդեանն) յաջողութեամբ աւարտեաց ի սմին զընթացս ուսման. որոյ վասն եւ տրուաւ նմա վկայագիրս այս կնքով Դպրոցիս յամի 18 յամսեան:

Ստորագրութիւնք Տեսչի եւ տղայ ուսուցչաց Դպրոցին:



301-354

ՅԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆ

Ո՞վ եւ երբ եւ ի Դպրոցէն, եւ յինչ պատճառս	Եսմիւ Գպրոց ի հիմն ի տարւոյն	Դիմո՛ւ տարւոյն յարի կողմի	Ս. Գ. Զատուհ պաշտօնակրտան.	Ետ Զատ -մ. գիտ՜ու Դ. Գ. Ետ Գիտ՜ու ժող. Դադումի Զ Դ. Գ. Գ. Դադումի Զ	Եկց. Գ. Դադումի Գ. Դադումի Դադումի Ետ Գ. Դադումի Դադումի Դադումի Դադումի Դադումի
1	1	1	1	1	1
2	2	2	2	2	2
3	3	3	3	3	3
4	4	4	4	4	4
5	5	5	5	5	5
6	6	6	6	6	6
7	7	7	7	7	7
8	8	8	8	8	8
9	9	9	9	9	9
10	10	10	10	10	10
11	11	11	11	11	11
12	12	12	12	12	12
13	13	13	13	13	13
14	14	14	14	14	14
15	15	15	15	15	15
16	16	16	16	16	16
17	17	17	17	17	17
18	18	18	18	18	18
19	19	19	19	19	19
20	20	20	20	20	20
21	21	21	21	21	21
22	22	22	22	22	22
23	23	23	23	23	23
24	24	24	24	24	24
25	25	25	25	25	25
26	26	26	26	26	26
27	27	27	27	27	27
28	28	28	28	28	28
29	29	29	29	29	29
30	30	30	30	30	30
31	31	31	31	31	31
32	32	32	32	32	32
33	33	33	33	33	33
34	34	34	34	34	34
35	35	35	35	35	35
36	36	36	36	36	36
37	37	37	37	37	37
38	38	38	38	38	38
39	39	39	39	39	39
40	40	40	40	40	40
41	41	41	41	41	41
42	42	42	42	42	42
43	43	43	43	43	43
44	44	44	44	44	44
45	45	45	45	45	45
46	46	46	46	46	46
47	47	47	47	47	47
48	48	48	48	48	48
49	49	49	49	49	49
50	50	50	50	50	50
51	51	51	51	51	51
52	52	52	52	52	52
53	53	53	53	53	53
54	54	54	54	54	54
55	55	55	55	55	55
56	56	56	56	56	56
57	57	57	57	57	57
58	58	58	58	58	58
59	59	59	59	59	59
60	60	60	60	60	60
61	61	61	61	61	61
62	62	62	62	62	62
63	63	63	63	63	63
64	64	64	64	64	64
65	65	65	65	65	65
66	66	66	66	66	66
67	67	67	67	67	67
68	68	68	68	68	68
69	69	69	69	69	69
70	70	70	70	70	70

ՅԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

[illegible]

Օրագրութիւն Նախական Դպրոցին (այս ա՛նո՛ւն) Քաղաքի (Կա՛հ քէղը)

(Օրհ՛նԱԿ, Ք, 4)

Տարի, ամիս, ամ-
սօթիւ եւ պատկեր
աւուրն

Դիտողութիւնը
պցեւելաց Դըւի-
քոցին

ԺԱՄԲ		Բ. ԴԱՍԱՐԱՆ	Ա. ԴԱՍԱՐԱՆ	Բ. ԴԱՍԱՐԱՆ				Ա. ԴԱՍԱՐԱՆ	Ա. ԴԱՍԱՐԱՆ			
Ի	Ժամէ			Տըւս ք				Սըւս ք	Սըւս ք			
Գ				Որեորքք					Որեորքք			
Ի	Ժամէ											
Գ												
Ի	Ժամէ											
Գ												
Ի	Ժամէ											
Գ												
Ի	Ժամէ											
Գ												
Ի	Ժամէ											
Գ												

Անուանը աշակերտաց որք փայտապար զրկեցին զան-
ձինս Ի դատաւութենէ.

Պ ա ի ա ա ղ ո շ ք ա չ ա կ ե ի տ ա ց Է ի ն

(0015114. Թ. 5.)

301354

Աշակերտաց Օխսական Դպրոցին (այժմ ԱՆՈՒՆ) քաղաքի (կամ գեղջ), որք հարցաքննեցան յաւարտ ընթացից ուսման յամենանն

18 *manfi:*

[illegible]

Ստորագրութիւնք Տեսչի Դպրոցին եւ այլոց հարցաքննողաց:

Ստորագրութիւն թերմական
Տէրսի.

(*) Պարտ է նշանակել թէ որդի վաճառականի իցէ թէ հասարակ քաղաքացւոյ կամ դիւզականի, յորմէ քաղաքէ կամ յորմէ գնդէ, եւ ուր իցէ ծննալ:

ՏՈՄԱՐ

Յորում գրին վկայագիրք տուեալք աշակերտաց Նախական Դըպ-
րոցին (այս անուն) քաղաքի (կամ գեղջ), յաղագս յաջողութեամբ
աւարտելոյ նոցա զընթացս ուսման յայսմ դպրոցի:

Կրօնական տոմար	Թէ՛ն սեւ տուաւ վկայագիրն, հանդերձ տե- ղեկութեամբք զնմանէ որք նշանակեցան ի վկայագրին:	Տարի, ամիս եւ օր տը- ջութեան վկայագրին:	Ստորագրութիւն ընդու- նողին վկայագրին:

301.354

[illegible]

Ստորագրուեցինք Տեսչի Դպրոցին եւ այլոց հարցաքննողաց:

(Զ Գ Գ Գ Գ Գ)

(ՈՐԹՈՍԻ Թ. 9)



Հետագայիս հրատարակութիւնը խըն-
դրուած է:

ՊՈՐԺՈՍԻ ԵԿԵՂԵՑԻՆ.

Պորժոմի գեղեցիկ եւ զուարճալի ա-
մարանոցը՝ Տփլիսու բնակչաց, մանա-
ւանդ ունեւորաց, սիրելի եւ առողջա-
րար տեղը լինելով, հետզհետէ կգար-
դարուի շքեղ շինուածքներով եւ ըզ-
բօսարաններով: Հասարակաց շինու-
թեանցը մէջ՝ գեղեցկագիր բլրի մի վե-
րայ կփայլի նաեւ նորակառոյց եկեղե-
ցին ազգիս Հայոց՝ հանդէպ պալատի
Փոխարքային, եւ թէպէտ քանի մի տա-
րի առաջ հիմնուած, բայց մինչեւ ցայ-
ժըմ՝ անաւարտ մնացած էր, ոչ այնչափ
գրամոց պակասութեան համար, որչափ
այնպիսի պատճառներով՝ որ բոլորովին
Հոգեւոր Իշխանութենէ կամ թէ շէն-
քին վերատեսուչներէն կախումն չու-
նէին: Այս ամառ Տփլիսու նորընտիր

Գեր. Առաջնորդ Տ. Գաբրիէլ Ս. Արքե-
պիսկոպոս ի Պորժոմ հանդիպած ժա-
մանակը՝ այն պատճառները վերացան,
եւ նորին Գերապատուութեան խնդրո-
վըն ու յորդորանօքն այն շինութեան
հոգաբարձութիւնը վերստին յանձն ա-
ռաւ նախկին վերատեսուչ նորին՝ ազ-
նուասիրտ, բարեպաշտ եւ ժրջան Պ.
Բարսեղ Յովսէփեան Խօջայեանց, որ եւ
ամենայն փութով պնդութեան կաշխա-
տի քանի մի ամէն աւարտել եկեղեցին:
Եւ որովհետեւ գրամական նպաստի եւս
կարօտութիւն կայ այն շինութիւնը վա-
յելչապէս եւ անխափան աւարտելոյ հա-
մար, Գեր. Առաջնորդ Տ. Գաբրիէլ Ս.
Արքեպիսկոպոսին յորդորանօքն այս նը-
պաստը մեծ սիրով եւ եռանդեամբ հա-
ւաքուելու վերայ է Տփլիսու բարե-
պաշտ ժողովրդեան մէջ:

Ե Ր Թ Ե Ի Ե Կ Ք.

Ի 5ն ամսոյս Գեր. Անդրէաս Արքե-
պիսկոպոս՝ Ատրպատականի Առաջնոր-
դըն՝ Դավրիժէն եկաւ ի Ս. Էջմիածին:
Եւ ի 12ն՝ Գեր. Գաբրիէլ Ս. Արքե-
պիսկոպոս՝ ներկայ ուսումնական շրը-
ջանում՝ ձեմարանի մէջ կարեւոր տնօ-
րէնութիւնքը եւ հոգացողութիւնքը
վերջացնելէ զինի՝ ի Ս. Էջմիածնէ մեկ-
նեցաւ ի Տփլիս երթալոյ համար:

ՍՈՒՐԶԱՆԳԱԿՔ ԲԻԶԱՆԳԵԱՆ.

ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՆՔ.

Թուրքիոյ մեր գաւառաբնակ եղբարց
վերաբերեալ հետագայ տեղեկութիւն-